Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթական ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործում»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Սոնա Մնացականյան

ԴՊՐՈՑ՝ «Զորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց»

Մարտունի-2023

Բովանդակություն

Ü»ñ³ÍáõÃÛáõÝ……
…….……3

ԳԼՈՒԽ 1: Հաղորդակցումը կրտսեր դպրոցական տարիքում

1. 1 Գաղափար հաղորդակցման մասին ……4
1.2 Հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում……
8
1.3 Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները……12

ԳԼՈՒԽ 2:
2.1 Անձի զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում ……17
2.2 Կրտսեր դպրոցականների հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորումը ուսումնական պրոցեսում……21

º½ñ³Ï³óáõÃÛáõÝ…….
…..……27

¶ñ³Ï³ÝáõÃÛáõÝ……
……...…29

Ներածություն

Մեր ժամանակներում մեծ ուշադրության է արժանանում կրտսեր դպրոցական տարիքը, քանզի այն համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար է դառնում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերումը, ինտենսիվորեն զարգանում և փոխվում են ճանաչողական գործընթացները, հատկապես մտածողությունը և հաղորդակցման հմտությունները (հնարավորությունները):

Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվում են կայուն պահանջմունքներ ու հետաքրքրություններ, համարժեք ինքնագնահատական, զարգանում են ինքնավերահսկողության ու ինքնակարգավորման հմտություններ, սեփական անձի և այլոց նկատմամբ քննադատական վերաբերմունք:

Հետազոտական աշխատանքի արդիականություն. Կրտսեր դպրոցական տարիքը հանդես է գալիս որպես երեխայի հոգեկան գործընթացների զարգացման սենզիտիվ շրջան: Այս տարիքում երեխայի մոտ առավելապես զարգանում են շփումն ու հաղորդակցումը: Կրտսեր դպրոցականների հաղորդակցումը չափազանց հրատապ խնդիր է, քանի որ հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորման աստիճանը ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության վրա, այլ նաև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա: Հաղորդակցումն ձևավորվում և բարելավվում է սովորողների շփման գործընթացում, ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս իրականացվող գործունեության մեջ: Հաղորդակցման ազդեցությունը կրտսեր դպրոցականի ձևավորման և զարգացման գործընթացում և հաղորդակցման մակարդակը կրտսեր դպրոցականների մոտ ոչ բավարար է հետազոտված: Դրա համար անհրաժեշտություն է առաջանում հետազոտել ոչ միայն հիմնական չափանիշները, այլ նաև հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործում առկա տեսանելի մակարդակները:

ԳԼՈՒԽ 1: Հաղորդակցումը կրտսեր դպրոցական տարիքում

1.1 Գաղափար հաղորդակցման մասին

Առօրյա կյանքում, տանը, աշխատավայրում,փողոցում, մենք անընդատ գտնվում ենք հաղորդակցման իրավիճակներում, որտեղ շփվում ենք ծանոթ և անծանոթ մարդկանց հետ: Հաղորդակցման յուրաքանչյուր

իրավիճակ մարդուց պահանջում է որոշակի լարվածություն,որպեսզի նա պահպանի մի շարք նորմեր և կանոններ,իրականացնի հաղորդակցման նպատակը և կառավարի հարաբերությունները; [5,էջ 286]:

Հաղորդակցման սյուբեկտները մարդիկ են:Հաղորդակցում կարող է տեղի ունենալ առնվազն երկու և ավելի մարդկանց միջև: Հաղորդակցվում են առանձին մարդիկ՝սյուբեկտները, իսկ այդ հաղորդակցության բնույթը կախված է այն բանից,թե ինչպիսի հարաբերություն գոյություն ունի նրանց միջև:

Հաղորդակցումը բարդ գործընթաց է, որն ունի իր կառուցվածքը, բաղադրատարրերը, մեխանիզմները գործընթացային փուլերը և կողմերը:

Հաղորդակցման գործընթացի կառուցվածքային տարրեր են՝

- հաղորդակցության սյուբեկտները,
- հաղորդակցման միջոցները,
- հաղորդակցվողների պահանջմունքները, շարժառիթները և նպատակները,
- հաղորդակցման ընթացքում փոխներգործության ու փոխազդեցության, ընկալման ու փոխըմբռնման մեխանիզմները,
- հաղորդակցման արդյունքները[5,էջ296]:

Ըստ Վ.Մյասիշչի՝ իրականության նկատմամբ անձի հարաբերություններում գերակա է երեք ուղղություն՝ա)հարաբերություն մարդկանց նկատմամբ, բ)հարաբերություն ինքն իր նկատմամբ, գ)հարաբերություն արտաքին աշխարհի առարկաների նկատմամբ:Այս երեք ուղղություններից անձի ձևավորման գործընթացում որոշիչ է հատկապես մարդկանց նկատմամբ հարաբերությունը,որովհետև անձը մարդկանց հետ ունեցած փոխհարաբերություններում ոչ միայն բավարարում է իր պահանջմունքները,այլև կարգավորում է իր վարքը[1,էջ 169]:

Հաղորդակցման միջոցները կարող են լինել խոսքային <վերբալ՝ բանավոր կամ գրավոր> և ոչ խոսքային <ոչ վերբալ>: Բնականաբար, հաղորդակցման ընթացքում, իր դերով և նշանակությամբ, առանձնանում է խոսքային միջոցը, որովհետև վերջինս բնորոշ է միայն մարդկանց և, բացի դրանից, հանդես է գալիս որպես ամենաուժեղ գրգռիչ: Հաղորդակցվողների պահանջմունքները, շարժառիթներն ու նպատակները հաղորդակցման գործընթացի անհրաժեշտ տարրն են :Հաղորդակցվելը մարդկանց հիմնական պահանջմունքներից է, որի իրականացումը կապված է նրանց մոտիվների, շահերի ու հետաքրքրությունների հետ: Յուրաքանչյուր հաղորդակցական գործունեություն հետապնդում է որոշակի նպատակ և կոչված է լուծելու մարդկանց հուզող խնդիրները,բավարարելու նրանց զոյաբանական, հոգևոր ու նյութական պահանջմունքները:

Հաղորդակցումն իրականացվում է մի շարք կարևոր գործառույթներ.

- Դրա միջոցով մենք բավարարում ենք մեր հաղորդակցվելու պահանջմունքը
- Մենք հաղորդակցվում ենք, որպեսզի պահենք և կատարելագործենք մեր ինքնահաստատումը,

- Դրա միջոցով մենք կատարում ենք մեր սոցիալական պարտականությունները,
- Հաղորդակցման միջոցով կառուցում ենք մեր փոխհարաբերությունները,
- Դրա շնորհիվ մենք կատարում ենք տեղեկատվության փոխանակում,
- Մենք հաղորդակցվում ենք, որպեսզի ազդենք ուրիշների վրա:

Հաղորդակցությունը կարող է լինել միջանձնային և ներանձնային,ներխմբային ու միջխմբային:Միջանձնային հաղորդակցումը երկու և ավելի մարդկանց միջև տեղի ունեցող փոխհարաբերությունն է: Ներանձնային հաղորդակցումը տեղի է ունենում միևնույն անձի ներսում՝նրա տարբեր <<Ես>>-երի երկխոսության արդյունքում:

Ներխմբային հաղորդակցման դեպքում իրար հետ հաղորդակցվում են միևնույն սոցիալական,էթնիկական,մասնագիտական խմբին պատկանող մարդիկ,իսկ միխմբայինի դեպքում՝ տարբեր խմբերին պատկանող անձինք:

Հաղորդակցության տիպերից են՝ ձևական/պաշտոնական/, ոչ ձևական, գործարար, մանիպուլյատիվ, գերծառույթային-դերային միջանձնային, հոգևոր, տոնական, սովորական և այլն: Դիտարկենք որոշ տիպեր՝զույգ հակադրությունների տեսքով.

- Գործարար ու խաղային հաղորդակցություն,
- Գործառութադերային և միջանձնային,
- Հոգևոր և օգտապաշտական'
- Ավանդական ու նորարարական
- Տոնական ու սովորական

Հաղորդակցման մոդելներն են՝ գծային մոդելում, ֆիզիկական <<աղմուկ>>, ինտերակտիվ մոդելում, ճանաչողական մոդել, համոզող մոդել և այլն:

Տեղեկատվական հաղորդակցումը մանկավարժական հաղորդակցման գերակշիռ մասն է: Դրա էությունը այն է, որ հաղորդակցության մասնակիցները միմյանց ուղարկում են հաղորդումներ, փոխանակում տարբեր բնույթի տեղեկություններ, միմյանց միջև հաստատում կապեր ու հարաբերություններ, որոնք անմիջական կամ միջնորդավորված ազդեցություն են թողնում իրենց մտածելակերպի ու գործելակերպի վրա:

Ինտերակտիվ հաղորդակցումը գործընթաց է, որի ժամանակ հաղորդակցման մասնակիցների միջև հաստատվում են տարբեր բնույթի կապեր, փոխհարաբերություններ, քննարկվում և լուծվում են համատեղ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ, և այդ ընթացքում մասնակիցներն ազդում են մեկը մյուսի գործողությունների ու վարքագծի վրա:

Պերցեպտիվ/ընկալման/ հաղորդակցման ընթացքում մարդիկ ոչ միայն շփվում,փոխգործում և փոխանակում են տեղեկություններ, այլև ուսումնասիրում, ընկալում և գնահատում են միմյանց և մեկնաբանում բացատրում միմյանց վարքագծի պատճառները:

Հաղորդակցման արդյունավետության պայմաններից են մասնակիցների՝միմյանց հետ շփվելու, կապեր ստեղծելու ընդունակությունը, հաղորդակցական համատեղելիությունը հարմարվածությունը: Տարբեր իրավիճակներ թելադրում են վարքագծի որոշակի ոճեր, և տարբեր իրավիճակներում մարդիկ իրենց դրսևորում են տարբեր կերպ: Եթե մարդու ինքնադրսևորումը չի համապատասխանում իրավիճակին, այն դժվարացնում է հաղորդակցումը: Հաղորդակցության արդյունավետության ապահովման գործում կարևոր նշանակություն ունի նաև հաղորդակցման ոճը: Հաղորդակցման ոճը մարդու վարքագծի անհատական կայուն ձև է, որը դրսևորվում է փոխգործունեության բոլոր պայմաններում՝անձնական ու գործարար հարաբերություններում, սոցիալական դերերի իրականացման ընթացքում[5,էջ296-338]:

1.2 Հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում

Մարդու համար ամենօրյա շփումը այլ մարդկանց հետ անհրաժեշտ է ինտելեկտուալ և բարոյական զարգացման համար: Անձի ինտելեկտուալ և անհատական զարգացման համար շփման տարբեր տիպեր կան՝ անձնական և գործնական, ճանաչողական և հյուրական, պլանավորված և նպատակային, կենսաբանական և սոցիալական, ինքնաբուխ և միջնորդված, վերբալ և ոչ վերբալ: Հաղորդակցումը մեծ նշանակություն ունի մարդու հոգեկանի ձևավորման, նրա զարգացման, ողջամիտ և կուլտուրական վարքի կայացման գործում[11, էջ 511-513]:

Ինչպես նշում է Ա.Բոդալյովը, հաղորդակցման սյուբեկտ կարող է լինել նա, ով այս կամ այն չափով գիտակցում է իր դերը հաղորդակցման մեջ, ունի մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու կարողություններ ու ընդունակություններ[6, էջ 10]: Միայն ֆիզիկական ու մտավոր կարողությունները բավական չեն հաղորդակցման համար: Անհրաժեշտ է,որ երեխան ունենա հաղորդակցական պատրաստվածություն, այսինքն՝տիրապետի հաղորդակցման անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների,որ ունենա հաղորդակցական ունակություններ և կարողանա հաղթահարել միջանձնային հաղորդակցման խոչընդոտները:

Հաճախ երեխան,նախադպրոցական տարիքում չունենալով հաղորդակցական ունակություններ, դպրոցում պարզապես չի կարողանում ինքնադրսևորվել: Այս տեսանկյունից հաղորդակցական ակտիվության խթանման գործընթացում կարևոր նշանակություն ունի հաղորդակցական խոչընդոտների հաղթահարումը: Մանկավարժական հաղորդակցման մեջ արգելակման հիմնական պատճառն ինքնավստահության պակասն է, որը հաղորդակցման կարողություններին ու հմտություններին ոչ բավարար տիրապետման հետևանք է: Արգելակման հաջորդ հիմնական պատճառներից է գնահատականի՝ թվանշանի գործոնը: Տեղին է նշել, որ հաճախ գնահատականը անդրադառնում է նաև երեխայի ներընտանեական միջանձնային փոխհարաբերությունների վրա:

Մնացած խոչընդոտները պայմանավորված են հաղորդակիցների՝մանկավարժի և համադասարանցիների հետ ունեցած փոխհարաբերություններով,թե որքանով են բավարարվում երեխայի հետաքրքրությունները,զարգանում է հաղորդակցման պահանջմունքները:Այստեղ կարևոր նշանակություն ունեն մանկավարժի հաղորդակցական պատրաստվածությունն ու գործիմացությունը:

Հաղորդակցումը պետք է կապված լինի երեխաների հետաքրքրությունների, հակումների, հնարավորությունների հետ: Միայն երեխայի հետաքրքրություններին համապատասխան և հույզերի հետ կապված ուսումնադաստիրակչական գործընթացը կարող է հաղթահարել երեխայի ծանծրույթը և ապահովել սյուբեկտայնության հավասար մակարդակներ բոլորի համար:

Այսպիսով, հաղորդակցական ակտիվության խթանումը պայմանավորված է միջանձնային խոչընդոտների հաղթահարմամբ,երեխայի հաղորդակցական ունակությունների ձևավորմամբ ու դրսևորմամբ:

Ինչպես նշում է Ռ.Կետելը, կարողությունները կամ ունակությունները կատարելագործում են անձի կառուցվածքի մեջ մտնող որակները:

Հաղորդակցական ունակությունները նպաստում են հաղորդակցական ակտիվության դրսևորմանը և հաղորդակցական որակի կատարելագործմանը: Այդպես երեխաննաև գիտակցում է իր դերը հաղորդակցման մեջ: Ձևավորվում է հաղորդակցունակ անձ, որը տիրապետում է հաղորդակցական սկզբնական ակտիվության:

Ակտիվությունն ընդհանրապես դիտարկվում է որպես անձնային որակ, որը դրսևորվում է գործունեության նկատմամբ հարաբերության՝պատրաստության,ինքնուրույնության ձգտման, դրա իրականացման որակի, նպատակին հասնելու արդյունավետ ուղիների ընտրման մեջ, խոսքային ակտիվությամբ, իսկ հաղորդակցական ակտիվության աղբյուրը՝ հաղորդակցման պահանջմունքի մեջ:

Համաձայն Ա. Մասլոուի մշակած պահանջմունքների աստիճանակարգի, եթե չի ձևավորվում հաղորդակցման պահանջմունքը, եթե ճնշվում է ինքնադրսևորումը, և անձը չի կարողանում ինքնաբացահայտվել, ինքնահիրացվել հաղորդակցման մեջ, ապա կարող է արգելակվել անձի զարգացումը: Հաղորդակցական ակտիվությաունը կապված է հաղորդակցման պահանջմունքի բավարարման հետ, և հաղորդակցական ակտիվության զարգացումը նպաստում է նաև հաղորդակցման պահանջմունքի փոխակերպման: Այսինքն՝ հաղորդակցական ակտիվությունը դառնում է ներքին հոգեվիճակ,գործունեության դրդապատճառ և անձնային որակ [1,էջ 171-174]:

Հասակակիցների հետ հաղորդակցումը երեխաներին տալիս է այն,ինչ սկզբունքորեն չի կարող տալ մեծահասակների հետ ասիմետրիկ հաղորդակցությունը: Պարզվում է,երբ երեխան շփվում է այլ երեխաների հետ նրանք երեխայություն,հիմարություն են անում,իրենց պահում են ոչ լուրջ,սովորական,նրանք ձեռք են բերում ինքնավարություն,անկախություն քան մեծերի հետ հաղորդակցման ժամանակ: Սակայն անհրաժեշտ չէ իդեալականացնել երեխաների հաղորդակցությունը և չափազանցնել մանկական հաղորդակցման գերակայությունը մեծերի հետ շփումից: Հասակակիցների հետ շփումը հանդիսանում է հիմք հետագայում մեծերի հաղորդակցման համար [15, էջ 80-83]:

Ուսուցչի հետ կրտսեր դպրոցականների հաղորդակցման միջոցով կազմակերպվում է դպրոցում երեխաների ուսումնական և արտադասարանական գործունեությունը: Ուսուցչի հետ հաղորդակցումը տեղի է ունենում

այնպիսի դրդապատճառների հիման վրա, ինչպիսիք են գործնական <որտեղ իրականացվում են կողմերի իրավունքները և պարտականությունները> և անձնական <որտեղ իրականացվում է հաղորդակցման գործընթացը>: Առաջին դասարանցիների և ուսուցչի հաղորդակցումը տեղի է ունենում գերիշխող դրական վերաբերմունքի ֆոնի վրա: Առաջին դասարանցիների մեծամասնությունը դրական է վերաբերվում ուսուցչին և անվերապահորեն ճանաչում է ուսուցչի հեղինակությունը: Ուսուցչի հետ հաղորդակցումը մեծ ազդեցություն է թողնում կրտսեր դպրոցական աշակերտի վրա: Ուսուցիչը կարող է օգնել երեխային հաղթահարել խնդիրները և դժվարությունները, բայց կարող է նաև իր շփոթված ռեակցիաների շնորհիվ ավելի խորացնել խնդիրը: Կարելի է ասել, որ, եթե երեխան բարենպաստ, վստահելի հարաբերություններ ունի ուսուցչի հետ, ապա կրթության և վարքային խնդիրները կլուծվեն: Եթե երեխայի և ուսուցչի միջև ի սկզբանե ձևավորվել են բացասական վերաբերմունք, անտիպատիա, ապա կրտսեր դպրոցական տարիքին բնորոշ տարիքային հատկանիշները կարող են դառնալ սուր, ինչը, բնականաբար, բացասաբար կանդրադառնա իր անձնական զարգացման վրա: Ընդհանուր առմամբ տարրական դպրոցի ուսուցիչը, իր հեղինակության շնորհիվ, մեծ ազդեցություն ունի տարրական դպրոցական տարիքի երեխայի անհատականության ձևավորման վրա: Հատկապես, եթե կրտսեր դպրոցական տարիքում մանկավարժը չի կարողանում կողմնորոշել և նպաստել նրա հաղորդակցական ունակությունների կառուցողական ինքնակազմակերպմանը, ապա հետագայում, երբ երեխան իր հետաքրքրությունները սկսում է փնտրել դպրոցից և ընտանիքից դուրս, նրա անձի զարգացումը ընթանում է տարբերայնորեն, և նա դառնում է անկանխատեսելի[9 էջ 9]:

1.3 Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները

Ըստ Դ. Բ. Էլկոնինի առաջադրած անձի հոգեկան գործընթացների զարգացման տարիքային պարբերացման կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է *6.7–10.11* տարեկանը:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով:

Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է

նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպե լերեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր է խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով: Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները: Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքները այժմ առաջանում են որ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փախարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն:

Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների կամածինության զարգացումը, որը բավական երկարատև գործընթաց է և սկսվում է ուսումնական գործունեության ընթացքում: Ձևավորվում է կամքը, որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջներով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվելով սեփական պահանջներով, ցանկություններով, ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին դրդում են մեծահասակները: Իմացական ոլորտի զարգացում:

Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը: Աշակերտին անհրաժեշտ է մտապահել լմեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Ձտիրապետելով հատուկ հմտությունների, երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակ ինյութի մտապահման դեպքում դա հետզհետե դժվարանում է: Ուսուցիչը օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ՝ իմաստավորված մտապահում /իմաստային տարրերի բաժանում, իմաստային խմբավորում, համեմատություն և այլ/ և վերարտադրման հնարներ: Երեխան սկզբնական փուլում դժվարանում է մտապահվող նյութի մեջ իմաստային տարրեր առանձնացնել, ինչը անհրաժեշտ է հմտացնել սկսած տարբեր նկարների և փոքր տեքստերի մտապահման գործընթացից:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն [2,էջ 35]: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, գտնել և մտապահել առարկաների կորևոր բնութագրերը և այլն: Ուսումնական գործունեությանը ն թացքում մեծահասկաների օգնությամբ երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը ստիմուլացնում է վերացական մտածողության զարգացումը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է ֆունկցիոնալ հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր

գործընթացները: Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/; ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ; ձևավորելով բավարար բառապաշար; ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլ: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է:

Կրտսեր դպրոցականի կյանքում վերոհիշյալ փոփոխություններից բացի հարկ է նաև նշել, որ երեխայի կրտսեր դպրոցական տարիքին անցումը ընթանում է ճգնաժամային իրավիճակներով, որը կոչվում է 7 տարեկանի ճգնաժամ:

Լ.Վիգոտսկին այս ճգնաժամի հիմնական ախտանիշներն է համարում անմիջականության, նախիրության կորուստը,կամակորությունը,սեթևեթանքը,: Ճգնաժամի կարևորագույն առանձնահատկությունը, ըստ նրա, <<...երեխայի անձնավորության ներքին և արտաքին ոլորտների տարբերակումն է>>: Երեխան այս տարիքում սկսում է իմաստավորել սեփական ապրումները, ինչի շնորհիվ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ:

Ա. Ն. Լեոնտևը 7 տարեկանի ճգնաժամը բացատրում է նոր առաջատար գործունեությանը և դրանով պայմանավորված նոր սոցիալական հարաբերություններին անցնելու վաղաժամ կամ ուշացած լինելու հանգամանքով, եթե երեխան ժամանակին անցնում է գործունեության նոր տեսակին, այսինքն հոգեբանորեն պատրաստ է լինում նոր գործունեությանը, ճգնաժամն ի հայտ չի գալիս[4. էջ 43]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- իմացական ոլորտի զարգացում
- ռֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

ԳԼՈՒԽ 2:

2.1 Անձի զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում

6-7 տարեկանում նա սպասում է իր կյանքի առաջին խոշոր փոփոխությանը: Դպրոցական տարիքին անցումը կապված է իր գործունեության, հաղորդակցման եւ այլ որոշակի փոփոխությունների հետ: Առաջատար գործունեություն է դառնում ուսումը, կյանքը փոխվում է, նոր պատասխանատվություններ են առաջանում, հասակակիցների հետ նոր հարաբերությունների հաստատում: Դպրոցը պետք է ներառի իր աշակերտներին ողջամտորեն կազմակերպված, նրանց համար արդյունավետ աշխատանք, որի կարեւորությունը անհատի անձնական հատկությունների ձեւավորման մեջ անհամեմատելի է: Կրտսեր դպրոցական տարիքը ստեղծում է մեծ հնարավորություններ անձի բարոյական որակների և դրական գծերի ձեւավորման համար:

Բարոյական վարքի հիմքը դրվում է դպրոցում կրտսեր դպրոցական տարիքում[13. էջ111]:

Երեխայի՝դպրոց ընդունվելու փաստը հատկանշվում է իմացական գործընթացների զարգացման նոր մակարդակի անցմամբ անձնային աճի համար բարենպաստ նոր պայմանների ստեղծմամբ: Այդ տարիքում անձնավորության զարգացման վրա ազդում են ոչ միայն ուսումնական,այլև գործունեության մյուս տեսակները՝խաղը,հաղորդակցումը և աշխատանքը:Ուսումնառության գործընթացում ուսումնական և գործունեության մյուս տեսակների միջոցովաստիճանաբար ձեւավորվում են կրտսեր դպրոցականի անձնային որակները,որոնք շարունակում են զարգանալ նաև հետագայում:

Կրտսեր դպրոցական տարիքին բնորոշ է անսահման վստահությունը մեծահասակներին <հատկապես ուսուցիչներին>:Այս տարիքի երեխաներն ամբողջությամբ ընդունում են մեծահասակի հեղինակությունը և անվերապահորեն հավատում նրա գնահատականին:: Կրտսեր դպրոցականները համեմատաբար լսող են,կատարող,և դա դրսևորվում է ինչպես վարքում, այնպես էլ ուսումնառության գործընթացում: Նրանք ընդունում են այն ամենը, ինչը նրանց սովորեցնում են: Երեխաները մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով տիրապետում են նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների:Կրտսեր դպրոցականների ուսումնական հաջողություններիկարևոր աղբյուրը նմանակման կարողությունն է: Նրանք գրեթե նույնությամբ, երբեմն առանց հասկանալու կրկնում են ուսուցչի դատողությունները, բերված օրինակները և այլն: Այս տարիքի երեխաները առանձնապես հակված չեն մտածելու դժվարությունների և բարդությունների մասին: Ուստի կարևոր է նրանց կողմից հաջողության հասնելու գիտակցված նպատակադրումը և դրան հասնելու համար վարքի կամային կարգավորումը:

Այս տարիքից աշակերտների մեջ սկսում է դրսևորվել կարևոր որակ՝ պարտքի գիտակցված զգացումը,որը դեռևս բավականաչափ կայուն չէ:Եթե քիչ են խրախուսվում երեխաի հաջողությունները և ավելի շատ պատժում են նրան անհաջողությունների համար,ապա նրա մեջ ձեւավորվում և ամրապնդվում է

անհաջողություններից խուսափելու դրդապատճառը:Իսկ հակառակ դեպքում ձևավորվում է հաջողություններին հասնելու դրդապատճառը:

Հետազոտությունները ցույց են տալիս,որ կրտսեր դպրոցականի պատկերացումները

<<ինքն իր մասին>> սերտորեն կապված են սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի, այսինքն՝ ինքնագնահատականի հետ:Այստարիքում երևան են գալիս տարբեր տիպի ինքնագնահատականներ,որոնք կարող են համարժեք՝ բարձր և ցածր լինել:

Ադեկվատ/համարժեք/ ինքնագնահատականով երեխաներն ակտիվ են, աշխույժ,հաղորդակցվող,առանձնանում են հումորի սուր զգացումով և այլն: Նրանք կարողանում են վերլուծել սեփական արարքները, առանձնացնել գործողության դրդապատճառը,մտածել իրենց մասին:

Ցածր ինքնագնահատական ունեցող երեխաները ներամփոփ են: Նրանք կենտրոնանում են սեփական թուլությունների վրա: Նրանց բնականոն զարգացմանը խանգարում են բարձր ինքնաքննադատությունը և անվստահությունը:

Բարձր ինքնագնահատականով երեխաները գերագնահատում են իրենց հնարավորությունները,գործունեության արդյունքները և անձնային որակները:

Նրանք ընտրում են այնպիսի առաջադրանքներ,որոնք իրենց ուժերից վեր են:

Կրտսեր դպրոցականի կայուն ինքնագնահատականով ձևավորվում է նրա հավակնությունների մակարդակը; Ինքնագնահատականի ձևավորման գործում գերակշռում է ուսումնական գործունեությունը՝ որպես հասարակայնորեն գնահատվող երևույթ: Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականը ձևավորվում և անհրաժեշտության դեպքում շտկվում է ուսումնական գործունեության ընթացքում՝ երեխաների միջև նոր հարաբերությունների հաստատման պայմաններում: Ուսումնական գործունեության ընթացքում կրտսեր դպրոցականը պետք է ինքնուրույն նպատակներ առաջադրի և վերահսկի սեփական վարքը:

Կրտսեր դպրոցական տարիքում կատարելագործվում են երեխայի երկու կարևոր անձնային որակները՝ աշխատասիրությունը և ինքնուրույնությունը: Կրտսեր դպրոցականների ինքնուրույնությունը հարաբերակցվում է մեծերից նրանց կախվածության հետ: Այս տարիքը կարող է դառնալ բեկումնային այս կամ այն որակի ձևավորման առումով: Երեխաների մեջ ինքնուրույնություն զարգացնելու նպատակով անհրաժեշտ է նրանց հանձնարարել գործեր, որպեսզի նրանք ինքնուրույն կատարեն դրանք: Ուսումնական գործունեության ընթացքում փոխվում է երեխաների հույզերի բնույթը, և տեղի է ունենում դրանց հետագա զարգացումը: Երեխաների հույզերի վրա ազդում են վարքի նոր կանոնների ու նորմերի յուրացումը, ուսումնական գործունեության հետ կապված պահանջների համակարգը,կամածին ուշադրությունը և հիշողությունը: Կրտսեր դպրոցականներն ավելի հավասարակշռված են , քան նախադպրոցականներն ու դեռահասները: Նրանց հատուկ է տևական, կայուն, ուրախ ու աշխույժ տրամադրություն: Կրտսեր դպրոցական տարիքում որոշ երեխաների մեջ նկատվում են բացասական աֆեկտիվ վիճակներ,որոնք կարելի

է բացատրել հավակնությունների մակարդակի և դրանց բավարարման հնարավորությունների միջև անհամապատասխանությամբ:

Երբ երեխան դպրոց է հաճախում, զգալիորեն մեծանում է նրա շփման ոլորտը, փոխվում է հաղորդակցման բովանդակությանը: Հաղորդակցման բովանդակությունն առանձնանում է մեծահասակների հետ գործնական շփմամբ: Սկզբնական շրջանում երեխաներն ավելի շատ շփվուն են ուսուցչի հետ: Նրա նկատմամբ հետաքրքրությունն ավելի է մեծանում, քան հասակակիցների,քանի որ նրա հեղինակությունը բարձր է: Ժամանակի հետ վիճակը փոխվում է, աստիճանաբար ուսուցիչը դառնում է ավելի քիչ հետաքրքիր, կարևոր ու հեղինակավոր: Փոխարենը մեծանում է հետաքրքրությունը հասակակիցների նկատմամբ: Հաղորդակցման բնույթի արտաքին փոփոխություններին զուգահեռ տեղի է ունենում նրա ներքին բովանդակային վերակառուցում, փոխվում են շփման թեմաները և դրդապատճառները: Եթե առաջին դասարանում ընկերոջ ընտրությունը որոշվում էր ուսուցչի գնահատականներով և ուսման հաջողություններով, ապա 2-3 դասարաններում միջանձնային հարաբերություններում աշակերտի կողմից ընտրություն է կատարվում ըստ անձնային արժանիքների և վարքի ձևերի գնահատման:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցական տարիքում դրվում է բարոյական վարքի հիմքը, յուրացվում են բարոյական նորմերը և վարքի կանոնները, ձևավորվում է անձնավորության հասարակական ուղղվածությունը: Բարոյական գիտելիքները, պատկերացումները և դատողությունները տարիքի վերջում նկատելիորեն հարստանում են, դառնում ավելիգիտակցված, բազմակողմանի ու ընդհանրացված:[3,էջ 106]:

2.2. Կրտսեր դպրոցականների հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորումը ուսումնական պրոցեսում

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հաղորդակցական հմտությունները՝ որպես սոցիալական ադապտացիայի միջոց, համարում են կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հոգեբանական առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցական տարիքը սոցիալական վարքի ուսուցման հարմարավետ շրջանն է, տարբեր սեռի երեխաների միջև շփման մշակույթն է, հաղորդակման և խոսքային կարողությունների ձևավորումն է, սոցիալական իրավիճակների տարբերման միջոցն է:

Երեխան, դպրոց հաճախելով, առաջին հերթին իր համար բացում է նոր վայր սոցիալական տարածության մեջ, ինչպես նաև ձևավորվում է մարդկային նոր հարաբերություններ: Նրա առջև դրվում են պարտականություններ՝ կապված ուսուցման գործունեության հետ: Մեծահասակները, ուսուցիչը, անգամ կողմնակի մարդիկ շփվում են երեխայի հետ այնպես, ինչպես մեծ մարդու հետ, որը իր վրա է վերցնում սովորելու պարտականությունը: Ինչպես նշում են Դ. Բ. Էլկոնինը և Վ. Վ. Դավիդովը, երեխան տարրական դպրոցում սովորում է հատուկ հոգեբանաֆիզիկական և հոգեբանական գործողություններ, որոնք պետք է վերահսկեն թվաբանական գործողությունները, կարդալը, ֆիզկուլտուրան, նկարչությունը, գրելու աշխատանքը և ուսումնական գործունեության այլ ձևեր: Բավարար պայմանների և երեխայի մտավոր զարգացման հիման վրա տեսական գիտակցության և մտածողության զարգացման համար ստեղծվում են բավարար նախադրյալներ:[16, էջ 34. 8, էջ 85]

Երկրորդ դեպքում էլ կրտսեր դպրոցականների մոտ լավ զարգացած են ռեֆլեքսիվ կարողությունները. «Ես պարտավոր եմ» մոտիվացիան գերակշռում է «Ես ուզում եմ» մոտիվացիային: Բացի հատուկ մտավոր ունակություններից տիրապետելուց՝ երեխան ուսուցչի վերահսկողությամբ սկսում է զարգացնել մարդկային գիտակցության հիմնական ձևերը (գիտությունները, արվեստը, բարոյականությունը և այլն):

Իսկ երրորդ դեպքում դպրոցը երեխայի առջև դնում է պարտականություններ՝ կապված խոսքի զարգացման հետ: Դասի ժամին դաս պատասխանելիս խոսքը պետք է լինի գրագետ, հակիրճ, արտահայտիչ և գեղեցիկ, շփման ժամանակ խոսքի կառուցումը պետք է համապատասխանի մեր սպառնալիքների, որը մեծ նշանակություն ունի հաղորդակցական կարողությունների ձևավորման համար: Երեխան պետք է իր վրա պարտականություն վերցնի իր ճիշտ խոսքի և այն ճիշտ

կառուցելու համար, որպեսզի կարողանա կառուցել հարաբերություններ ուսուցիչների և հասակակիցների հետ:

Կրտսեր դպրոցականների զարգացման մեջ կարևորվում է այսպես կոչված «սոցիալական խոսքի» զարգացումը, որտեղ փորձ է կատարվում մեկ այլ մարդու հաղորդել ինչ-որ բան: Երեխաների խոսակցությունները դիտելով և լսելով՝ Ժ. Պիաժեն բացահայտել է, որ սոցիալական խոսքը հակառակ է առօրյա խոսակցականին: Գիտնականը այն խոսքը, որի դեպքում մարդը խոսում է ինքն իրեն այլ մարդկանց ներկայությամբ, անվանել է կոլոկտիվ մենախոսություն: [12, էջ 65]:

Լ. Ս. Վիգոտսկին համարում էր, որ ինքնուրույն խոսքը ուղղորդում է երեխայի մտածողության զարգացմանը և գործունեությանը՝ օգնելով երեխային կատարել առաջադրանքը:[8, էջ 89] Նա ապացուցել է, որ ինքնուրույն խոսքը չի անհետանում, այլ «միանում է մտքի հետ»՝ վերածվելով արտաքին խոսքի: Երբ մտածողությունը և խոսքը ամբողջությամբ միավորվում են, պարտադիր չէ, որ երեխան մտածի բարձրաձայն, նա կարող է գործածել անձայն արտաքին խոսքը: Դա կատարվում է այն դեպքերում, երբ երեխան որոշում է իր վարքի դրսևորման սոցիալական խնդիրները, օրինակ՝ փողոց դուրս գալիս, կոնֆլիկտային իրավիճակներում, որոնք տեղի են ունենում խաղերի ժամանակ: Հետևաբար երեխայի հաղորդակցական կարողությունների ձևավորումը տեղի է ունենում լեզվի միջոցների ակտիվացման շնորհիվ: Լեզվի միջոցներով իր միտքը ազատ արտահայտելու կարողության դեպքում օգտագործվում են նախադասության տարբեր ձևեր: Երեխայի խոսքը, ինչպես մեծահասակինը, համարվում է մարդկային գիտակցության հատուկ ձևերից և միաժամանակ նրա տեսանելի արտացոլանքը, թե ինչպես է երեխան խոսում ազատ շփման ժամանակ(պատասխանում է հարցերին, պատմում է իրեն անհանգստացնող երևույթների մասին, իրադարձությունների մասին): Կարելի է կազմել ներկայացում նրա մասին, թե ինչպես է մտածում, ընդունում և հասկանում իրեն շրջապատող մարդկանց:

Չորրորդ դեպքում էլ, հենց կրտսեր դպրոցական տարիքում կառուցվում են հարաբերություններ այլ մարդկանց հետ: Հատկապես կոլեկտիվ միջավայրում հայտնվում են վարքի յուրահատուկ դրսևորումներ: Սոցիալական հարաբերությունների երկու ոլորտ՝ «երեխան մեծահասակ է» և «երեխան փոքրահասակ է», փոխներգործում են միմյանց վրա՝ հիերարքիկ կապի միջոցով: [7 էջ 125]

Շարունակելով հետազոտությունը երեխայի հոգեբանության այդ շրջանում՝ Վ. Ս. Մուխինան նշում է, որ «երեխա-մեծահասակ» և «երեխա-ծնողներ» ոլորտներում հայտնվում են հարաբերություններ՝ «երեխա-ուսուցիչ» հարաբերությունը: Երեխայի առջև դրված պարտականությունները, որոնք առաջադրում է ուսուցիչը, ևս ավելի ուշադրությամբ է վերաբերվում, քան ընտանիքի կողմից առաջադրված պարտականություններին, չէ՞ որ շփման առաջնային

պայմաններում հնարավոր է ինքնուրույն հայտնաբերել և գնահատել վարքը: Միայն ուսուցիչն է, որ դնելով աշակերտի առջև պահանջներ՝ գնահատելով նրա վարքը, ստեղծում է երեխայի վարքի դրսևորման սոցիալականացման պայմաններ, որը բերում է սոցիալական միջավայրում ճիշտ դրսևորվելու կարողություն: Տարրական դպրոցում երեխան ընդունում է նոր պայմաններ, որոնք առաջադրված են ուսուցչի կողմից և աշակերտներն այս դեպքում փորձում են լավ կատարել պահանջները և հետևել կանոններին: Ուսուցիչը երեխայի համար դառնում է կերպար, որն ընդգծում է երեխայի հոգեբանական վիճակը ոչ միայն դասարանում դասերի ժամին, այլև համադասարանցիների հետ շփման ժամանակ, ինչպես նաև ընտանիքում: [10, էջ 45]

Շփումը դառնում է սոցիալական հարաբերությունների դպրոց: Երեխան անգիտակցորեն իր համար ստեղծում է շփման տարբեր ձևեր: Ինչպես նաև անգիտակցորեն նա փորձում է այդ ձևերը՝ հենվելով իր սեփական հնարավորությունների վրա: Այս ձևով հենց ընտանիքը, ուսուցիչը և գործընկերները օգնում են կրտսեր դպրոցականին, որ նա կարողանա կատարել իր առջև դրված պահանջները և ընդունի դրանք: Ե. Ե. Սապոգովան նշում է, որ կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության առանձնահատկությունները ստեղծում են հաղորդակցական կարողությունների ձևավորման համար հարմար պայմաններ: Այլ կերպ ասած ուսումնական գործունեությունը «շրջում է երեխային իր վրա», պահանջում է ռեֆլեքսիա՝ «ինչպիսին եմ եղել» և «ինչպիսին եմ դարձել» հարցերի գնահատականը: Ուսումնական գործունեությունը սկսվում է այն ժամանակ, երբ աշակերտը կարողանում է ինքնագնահատել: [14, էջ 36]

Հինգերորդ դեպքում ուսումնական գործունեության մեջ արդյունավետություն կնկատվի միայն այն դեպքում, եթե երեխան կարողանա ուղղորդվել իր հոգեբանական գործընթացներով և վարքով: Դա հնարավորություն է տալիս ենթարկվել ուսուցիչներին և դպրոցի կարգապահությանը և նպաստում է հոգեբանական գործընթացների նոր որակների ձևավորմանը: Նա կարողանում է գործողության համար որոշել նպատակ, գտնել նպատակին հասնելու միջոցներ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար այս հոգեբանական գործընթացի ձևավորումը համարվում է հիմք ոչ միայն նրանց արդյունավետ ուսուցման համար, այլ նաև նրանց հաղորդակցական կարողությունների ձևավորման համար, որը կապված է երեխաների սոցիալական ադապտացիայի հետ:

Վեցերորդ դեպք. Հոգեբանների կողմից ապացուցված է, որ կրտսեր դպրոցականներիից շատերը նախապայմաններ են ստեղծում սոցիալական կրևոր որակների ձևավորման համար: Նոր սոցիալական հարաբերությունների և կապերի հարմարվելը, որտեղ սկսում է ձևավորվել անհատը, սահմանվում է նրանով, որ երեխան մտնում է նոր կոլոկտիվ. Ի՞նչ տեղ է գրավում այդտեղ, ինչպե՞ս է շփվում դասընկերների և մեծահասակների հետ, ինչպե՞ս է վերաբերվում դպրոցին, ինքն իրեն որպես աշակերտի: Կրտսեր դպրոցականների հաջող ադապտացիայի համար, ինչպես ցույց է տալիս փորձը,

անհրաժեշտ է հիմք ընդունել նրանց այնպիսի անձնական որակները, ինչպիսիք են շփումը, բարյացակամությունը և անմիջականությունը: Շփման տակ մենք հասկանում ենք երեխաների փոխհարաբերություններ կառուցելու կարողությունները, ինչպես մարդկանց, այնպես էլ դասընկերների հետ: Դա հնարավորություն է տալիս շփման մեջ լինել ակտիվ, չվախենալ, առաջինը սկսել շփումը անծանոթ երեխաների հետ, ուսուցչի հետ, այդ դեպքում օգտագործելով խոսքի մշակույթի կանոնները, դասընկերների հետ կարողանալ ստեղծել հարմար գործունեություն (խաղային, ճանաչողական, աշխատանքային և այլն): Հաղորդակցական կարողությունների ձևավորման և համագործակցության համար շփումը հանդիսանում է հիմք: Բարյացակամությունն արտահայտվում է դիմացինին ընդունելու այնպիսին, ինչպիսին նա կա կարողությամբ, մյուսին լսելու կարողությամբ, նրան հասկանալ փորձելով, պատրաստակամ լինել մյուսին օգնելու համար:

Կրտսեր դպրոցականների ևս մեկ առանձնահատկություն կա, որը հնարավորություն է տալիս ավելի լավ լուծել հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրը, որը միջոց է նրանց սոցիալական ադապտացիան իրականացնելու համար: Երեխաները չեն կորցրել իրենց հետաքրքրությունը խաղի նկատմամբ, և դա հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը կազմակերպել յուրօրինակ և հետաքրքիր: Խաղը կարելի է նաև օգտագործել հաղորդակցական կարողությունների ձևավորման համար, ինչպես նաև ճիշտ սոցիալական վարք ձևավորելու համար: Այս առանձնահատկությունները մենք օգտագործել ենք ամբողջությամբ՝ ներառելով տարբեր մեթոդիկ հնարներ, որտեղ հավաքված են խաղերը: Խաղերը օգտագործվում են առկա գիտելիքների ամրապնդման և հաղորդակցական կարողությունների ձևավորման համար ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դրանից դուրս(դասամիջոցներին, ֆիզկուլտ դադարների ժամանակ, դաստիարակչական գործընթացների ժամանակ):

Այն երեխաները, որոնք հոգեբանորեն պատրաստ չեն դպրոցին, ապա որպես կանոն նրանց մոտ բացակայում են տարիքին համապատասխանող ձևավորված որակները և կարողությունները: Նրանց վարքը բնորոշվում է անկազմակերպվածությամբ: Նրանք լինում են անկարգապահ ակտիվ, կամ էլ հակառակը՝ անհամեմատ դանդաղաշարժ, ներամփոփ: Այսպիսի երեխաները վատ են գիտակցում շփման վիճակի առանձնահատկությունները և դրա համար էլ շատ հաճախ իրենց դրսևորում են ոչ ադեկվատ: Խաղերի ժամանակ նրանք խախտում են կանոնները, ստեղծում են իրադրային իրավիճակներ: Այս ձևով դպրոցում երեխայի ուսուցման նախնական շրջանում սկսվում են ձևավորվել սոցիալական կարևոր որակներ, որոնք հնարավորություն են տալիս սոցիալական ադապտացիան արագ ձևավորել:

Եզրակացություն

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքում ստացված տվյալների հիման վրա հանգեցի հետևյալ եզրակացություններին՝

- Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Այս տարիքում առաջատար է դառնում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռք բերումը, ինտենսիվորեն զարգանում և որակապես փոխվում են ճանաչողական գործընթացները՝ ձեռք բերելով միջնորդավորված և կամածին բնույթ:
- Կրտսեր դպրոցական տարիքը ստեղծում է մեծ հնարավորություններ անձի բարոյական որակների և դրական գծերի ձևավորման համար:
- Հաղորդակցումը մարդու փոխներգործելու կարողությունն է այլ մարդկանց հետ:
- Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվող և զարգացող հաղորդակցական ունակությունների վերաբերյալ առկա տեսական և գործնական մոտեցումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ հաղորդակցական ունակությունների ձևավորման աստիճանը ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության վրա, այլ նաև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա:
- Հաղորդակցումը ինքնին հանդիսանում է աշակերտների բազային հատկանիշներից մեկը, որը մի կողմից ապահովում է ուսման մեջ հաղորդակցման գործընթացի արդյունավետ ընթացքը, իսկ մյուս կողմից՝ ձևավորվում և հղկվում է արդյունավետ ուսումնական գործընթացի ընթացքում:
- Հաղորդակցական գործընթացի զարգացման առավել արդյունավետ շրջան է համարվում դպրոցական տարիքը:
- Հաղորդակցումը մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականի հոգեկանի ձևավորման, նրա՝ որպես անձնավորություն զարգացման, ողջամիտ և բարոյական վարքի կայացման գործում:
- Կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցումը մեծ ազդեցություն ունի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի, ինքնահաստատման, սեփական <<ես>>-ի գիտակցման, ինչպես նաև դպրոցական միջավայրին արագ հարմարեցման/ադապտացիայի/ գործում:
- Երեխայի հոգեկան զարգացման համար հատկապես մեծ նշանակություն ունի հաղորդակցումը մեծերի հետ օնտոգենեզի վաղ շրջանում: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առանձնահատուկ է մեծահասակների հետ հաղորդակցումը: Հաղորդակցման

հաճախականությունը,նրա բազմազան պարունակությունը, նպատակը և միջոցները երեխայի զարգացման գործում կարևոր դեր են կատարում:

- Կրտսեր դպրոցականների անձի ձևավորումը տեղի է ունենում մեծահասակների և հասակակիցների հետ հարաբերության, ուսումնական գործունեության և հաղորդակցման ազդեցության տակ:

Օգտագործված գրականության ցանկ

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Ա. Ս. ՄԻՋԱՆՁՆԱՑԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ Երևան 2015 2. Ասատրյան Զ. <<Տարրական կրթություն մանկավարժություն>> էջ 25 3. Թունյան Զ.Ե. Երիցյան Լ.Մ <<Կրտսեր դպրոցականի հոգեբանություն>> 4. ԽուդոյանՍ. Ս. <<Անձիզար գացման ճգնաժամային տարիքները>>-Երևան: Զանգակ – 97, 2004.

5. Կարապետյան Վ.Ս. Գեվորգյան Մ.Ռ. Բերբերյան Ա.Ս. Պետրոսյա Ռ.Ս. Խաչատրյան Հ.Վ. <<Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու>> 6. Бодалев, А. Психвлвгия обшения. М., 2002, 7.Выготский,

Л.С. Педагогическая психология / Л.С. Выготский. – М. : Просвещение, 1991
8.Давыдов, В.В. Проблемы развивающего обучения / В.В. Давыдов. – М. : Педагогика, 1986.
9. Гонина О.О. <<Психология младшего школьного возраста>>
10. Мухина, В.С. Возрастная психология / В.С. Мухина. – М. : Академия, 2002. 11. Немов.Р.С. <<Психология>> кн 1 Москва 2008 12. Пиаже, Ж. Речь и мышление ребёнка / Ж. Пиаже. – М., 1994. 13. Подласый. И. Петагогика: обшие основы. Процесс обучения. М., 2000 кн 1 14. Сапогова, Е.Е. Своеобразие переходного периода у детей 6–7летнего возраста / Е.Е. Сапогова // Вопросы психологии. – 1986. – № 4.
15. *Цукерман Г.А.* Как младшие школьники учатся учиться? - М.; Рига, 2000. - С. 80-83 16. Эльконин, Д.Б. Психология обучения младшего школьника / Д.Б. Эльконин. – М., 1974.
https://armineab.wordpress.com «Դպրոցահասակ երեխայի անձի զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները»Ի. Խանամիրյան

http://loveread.ec/read_book.php?id=60624&p=9

Հավելված 1

Մայրենիի դասի պլան

Դասարան՝ 3-րդ
Դասի տիպը՝ ամրակայման դաս, 2-րդ դասաժամ
Դասի թեման՝ <<Հայկը և Բելը>>: Գոյականի ձևափոխությունները խոսքում (առանց մատնանշելու հոլովները)
Դասին պատակները՝Կարդալու կարողությունների զարգացում՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները:
Ամրակայել երկխոսությունները դերերով կարդալու կարողությունները:
Զարգացնել նկարագրական խոսք կառուցելու կարողությունները՝ բնագրից ընտրելով և կարդալով այն բառերն ու արտահայտությունները, որոնցով հեղինակը նկարագրում կամ բնութագրում է հերոսներին:
Ամրակայել բնագրի հերոսներին համեմատելու և հակադրելու կարողությունը:

Լեզվական կարողություններ՝ Կսովորեն նախադասությունների մեջ տեղադրել գոյականը՝ համապատասխան ձևափոխություններով: Կամրապնդեն հականիշ բառերի մասին ունեցած գիտելիքները:
Ցուցադրական նյութեր՝ <<Հոմանիշներ-հականիշներ>> ցուցապաստառ, քարտային առաջադրանքներ, սահիկահանդես, համակարգիչ, հերոսների նկարներով պաստառ
Դասի ընթացքը՝ Խթանման փուլ՝ կազմակերպչական պահ (այբուբենի արտասանություն և տնային հանձնարարության պարզաբանում): Մտագրոհի մեթոդով աշակերտները կներկայացնեն, թե ովքե՛ր են հերոս համարվում և ովքե՛ր են հայրենիքի մի զարկը:
Արևի շողերին կլրացնեն Հայկ Նահապետ, Սասունցի Դավիթ, Զորավար Անդրանիկ, Մեսրոպ Մաշտոց, Մխիթար Հերացի, Կոմիտաս, Գարեգին Նժդեհ, Վիկտոր Համբարձումյան և այլն:



Իմաստի ընկալման փուլ՝ կկարդան <<Հայկը և Բելը>> բնագիրը նախ միմյանց շարունակելով, ապա՝ ընտրովի և դերերով:
Ընտրովի ընթերցանության համար նախատեսված հարցեր.
1.Ո՞վ էր Հայկը և ինչու՞ հեռացավ բելից:
2.Ո՞վ էր Բելը և ինչու՞ հարձակվեց հայկի երկրի վրա:
3.Կարդալ Հայկին և Բելին բնութագրող տողերը:
4.Կարդալ Հայկի և Բելի կռիվը նկարագրող հատվածը:
Ցուրաքանչյուր աշակերտ կստանա նաև լեզվական առաջադրանքներ գոյականի վերաբերյալ.
1.Բնագրից դուրս գրել անձ ցույց տվող 5 գոյական և գործածել նախադասություններում:
2.Բնագրից դուրս գրել հոգնակի թվով գործածված գոյականները և դարձնել եզակի:
3. Հայկ գոյականը տեղադրել նախադասություններում՝ ենթարկելով համապատասխան ձևափոխությունների.
——————— քաջ ու կորովածիգ մի դյուցազն էր:
——————— սակավաթիվ զորքը հաղթեց Բելի մեծաքանակ զորքին:
Ես շատ եմ ուզում նմանվել ———————:
Այդ օրվանից ——————— անունով մեր երկիրը կոչվում է Հայաստան, իսկ մենք՝ հայ:
——————————— հայերը քաջություն են ժառանգել:
4. Բնագրից դուրս գրել հականիշ բառազույգերը:
5.Նետ բառը համապատասխան ձևափոխություններով տեղադրել նախադասությունների մեջ:
Ֆիզդաստ՝ <<Հոմանիշներ-հականիշներ>> պաստառի թեմատիկ նկարում գտնել հականիշ բառազույգեր:
Վարժություն՝ <<Ուռենի-բարդի>>
Տ-ածև աղյուսակով կբնութագրեն Հայկին և Բելին:

Հայկ	Բել

քաջ	հսկա
հսկա	վախկոտ
կորովածիգ	բռնակալ
հպարտ	գոռոզ
համարձակ	ամբարտավան
անվախ	մեծամիտ
հայրենասեր	դաժան
ազնիվ	ինքնահավան
ուժեղ	

Ստեղծագործական աշխատանք՝ Կհամեմատեն <<Հայկի և Բելի մենամարտը>> <<Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի մենամարտի>> հետ:



Բացատրել <<Շունչը փչել>> դարձվածքի իմաստը՝ գործածելով նախադասությունների մեջ:



Հորինել <<Բանակապ>> Հայկ և հայ բառերով:

Կշռադատման փուլ՝ Անդրադարձ կատարել դասանյութին, ամփոփել հարցերի միջոցով և <<Քառաբաժան>> մեթոդով:

Ի՞նչ տեսա:	Ի՞նչ լսեցի:

Ի՞նչ զգացի:	Ի՞նչ սովորեցի և իմացա:

Գնահատել՝ պատճառաբանելով՝ ըստ կատարած աշխատանքների:
Տնային հանձնարարություն՝ արտահայտիչ կարդալ բնագիրը, կատարել առաջադրանք 2, 5:

Հավելված 2

Առարկան՝ Մայրենի

3-րդ դասարան

Թեման- հին դաս-__Անտառի բնակիչները

նոր դաս- Արջի և վարազի կռիվը: Բառ (կրկնություն)

Նպատակը-

1. Գիտելիքների համակարգ

- կընթերցեն բնագիրը՝ զարգացնելով երկարաշունչ նախադասությունների սահուն և հասկանալով կարդալու կարողությունները
- կկարողանան պատմվածքում շարադրված դեպքերի մեջ տեսնել պատճառահետևանքային կապեր՝ գուշակելով դրանց հետագա ընթացքը
- հարց ու պատասխանի միջոցով կվերլուծեն բնագիրը՝ կարևորելով ստեղծագործության մեջ տեղի ունեցող դեպքերը

1. Կարողությունների համակարգ

- կկարողանան որոշել ստեղծագործության հերոսների արարքները և դրանց դրդապատճառները
- կվերադասավորեն խառնված նկարների հերթականությունը, կսովորեն կազմել բնագրի պլան
- կվերարտադրեն բնագիրը որպես ակնատես
- կքննարկեն __Ինչո՞վ է զարմանալի այս պատմությունը|

1. Արժեքային համակարգ

- ընդլայնել ճանաչողական հետաքրքրությունները
- դաստիարակել սեր դեպի հայրենի բնությունը, կենդանական աշխարհը

Լեզվատրամաբանական աշխատանք

- կկարողանան տրված բառերը համապատասխանաբար տեղադրել նախադասության մեջ՝ խորացնելով բառի իմաստային գործածության մասին ունեցած գիտելիքները:

Դասի տիպը՝ համակցված

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ՝ մտքերի տարափ, զրույց, հարց ու պատասխան, աֆրոստիկոսի, հանելուկի հորինում

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգով

Խթանման փուլ՝ 10-12 րոպե

Տնային աշխատանքների ստուգում

Դերային խաղով ներկայացնել բանաստեղծությունը (դերերի ընտրությունը կատարել երեխաների նախաձեռնությամբ)

Բնութագրել բնագրի հերոսներին, արարքները (գ. մակարդակի աշակերտներ)

Նշել նմանություններն ու տարբերությունները՝ յուրովի նախապատրաստումը ձմռանը (բ. մակարդակի աշակերտներ)

Հորինել աֆրոստիկոս կամ հանելուկ արջուկ բառով (գ. մակարդակի աշակերտներ)

Ֆիզդաստար

Իմաստի ընկալում՝ 30 րոպե

Զրույց՝ Վ. Անանյանը սիրել է որսորդական և հետաքրքաշարժ պատմություններ և գրի է առել: Կկարդանք __Արջի ու վարազի կռիվը| զարմանալի դեպքը, որի ականատեսը եղել է նրա որսորդական ընկերներից մեկը:

Վ. Անանյանի հղումը՝

Ես հասկանում եմ քեզ, լսում եմ սրտիդ զարկերը, ի՛մ լավ, ի՛մ զգայուն բարեկամ...

Կարդալ պատմությունը պարբերություն առ պարբերություն:

Մեկնաբանել գաղափարական բովանդակությունը:

Անծանոթ բառերի բացատրություն՝ թավուտ, վխտալ, փոքրսող տալ, ելարան խուճապ, ահաբեկված, և արջ, առաջ, նայել, երևա, հետևում, սայթաքել, մոթմոթալ, պատառոտել բառերը գրել բառատետրում:

Դիտել կից նկարները և համեմատել բնագրի մասերի բովանդակության հետ:

Նոր դասը կկարդան լավ սովորող աշակերտները:

Կատարել առաջադրանք 1 (բ. մակարդակի աշակերտներ):

Դիտել նկարները, պատմել և որոշել ճիշտ հերթականությունը (գ. մակարդակի աշակերտներ):

Բնագրում կգտնեն յուրաքանչյուր նկարին համապատասխանող հատվածը և կվերնագրեն:

Կկազմեն պլան՝

1. Որսորդն անտառում:
2. Արջի ելարանը:
3. Վարազն ու ձագերը:
4. Արջի ու վարազի կռիվը:

Կշռադատում՝ 3 րոպե

բ. մակարդակի համար.

Ի՞նչ էր անում որսորդը:

Ինչո՞ւ չկրակեց:

Արջն ինչո՞ւ էր ելարան պատրաստել:

Ինչո՞ւ արջի վրա մոլեգնած հարձակվեց վարազը:

գ. մակարդակի համար.

Հայտնի՛ր քո կարծիքը, ընտրի՛ր ճիշտ տարբերակը.

Արջը (վարազը) ճիշտ վարվեց, որովհետև....

Արջը (վարազը) սխալ վարվեց, որովհետև....

Ինչո՞վ էր զարմանալի այս պատմությունը:

Ի՞նչն է հուզական երանգ հաղորդում պատմվածքին:

Անել մեկնաբանություններ և գրել __Հրաշք տետրում|:

__Ծնողի սիրտը նուրբ է ու փխրուն, բնության մեջ ոչ մի բան իր զգացմունքայնությամբ չի կարող փոխարինել նրան|:

__Վարազի հայրն էլ հայր է, սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը|:

Լրացնել խաչբառը: Կարդալ թաքնված ընդգծված բառը և նկարագրել (անտառ):



1. Հաղթող կենդանին
2. Արագավազ կենդանի, շղթիկ:
3. Վայրի աղավնի(արտույտ):
4. Պատմվածքի մոթմոթան կենդանին:
5. Կենդանիների արքան:

Հասկացանք, որ կենդանիներին էլ են հատուկ այն հույզերը, որոնք ունեն մարդիկ:

Գնահատում

Տնային աշխատանքի հանձնարարում.

Վարժ. 2 (գ. մակարդակի համար),

Վարժ. 3 (բ. մակարդակի համար)